

վախելու և առողջանալու թեմամբ՝ անսայթաք ընթերցողը, և ևս իւրաքանչիւր բան զեղանակա զեղեցիկապէս յարմարէր, զմայլեալ զարմանային ի միտս իւրեանց և ցմբմանս հարցանէին, ո՞վ իցէ սա, և յորմէ՞ զաւանդէ» (13) :

Հ. Ղ. Տ.

(13) Պատմութիւն Կենաց և Վարուց Տեառն Մխիթարայ... էջ 40:

ԱՆՆՄԱՆ ԾԱՂԻԿ

Առտուն իջայ ոսկի շաղով ևս պարտէզ,
Հաղար դոյնով վարդեր դըրի իմ սրտիս,
Հաղարներու մէջ Մարիամ նըման քեզ,
Սիրուն ծաղիկ չըկար ժպտող երեսիս:

Ես լըսեցի և սոխակին դայլայլներ,
Որ սիրարբած զեփիւնն առած կը տանէր,
Հաղարներու մէջ երգիւ պէս երկնաբեր,
Երգ մը չըկար որ իմ սրտիս հետ խօսէր:

Փոթորկայոյց ծոցը անծիր ծովերուն,
Հաղարերպեան մարգարիտներ կը շողան,
Հաղարներու մէջ նըման քեզ ասմաղուն
Խուզարկուներ ալ մ'աննըման չըզըտան:

Գիշերուան մէջ բոյլ բոյլ աստղեր ծաղկեցան,
Կամարին մէջ, զերդ լուրթ աչեր հողեհմայ,
Ծաւալեցի էջերն երկնի խորութեան,
Բայց քեզի պէս չող չող աստղ չըզըտայ:

Սրտերու մէջ ո՞րքան արցունք, ո՞րքան սէր,
Իջաւ անդու Գողգոթայի կատարէն,
Բայց Մարիամ քու սիրոյդ պէս կարեւիւր,
Ոչ մէկ սրտի մէջ սէր զըտայ նըկարէն:

Բոց հրեշտակներ իջան լուսեղ կամարէն,
Հաղորդուելու քու աննըման տեսիլքիդ,
Այնքան չքնաղ դըտան պատկերդ ոսկեղէն
Որ վեր տարին պատկերին մօտ Միածնիդ:

Հալէպ, 1954

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՍՏՈՒԿԱՍՏՈՐ ԱՆՉԱՄԵՄԱՏ ԵՐԳԵԶԸ

Մեր երկնքի զեղեցիկութիւնը, մեր լի-
ճերու հեղ մըմունքը, մեր գետերու յոր-
դահոս գնացքը, մեր մարդերու զմրուխտէ
հանդերձը, մեր պարտէզներու գունեան
ծաղիկները, այդ ամէնը կը ցորան Նարե-
կի մէջ, որ հրապոյր է, հիացում և ան-
զուգական զեղեցիկութիւն:

Այն ինչ որ կ'երգեն Անիի քանդակները,
կամ կաթողիկէին զմբէթներու համանը-
ւաղը կը հիւսէ դուքը Տիրամօր փառքե-
րուն, ինչ որ մեր Ծարականները կը հրա-
շագործեն ամէն օր բանաստեղծական
նուրբ արուեստով, և զոր Հայը իր սրտին
մէջ կը տանի աշխարհէ աշխարհ, այդ ա-
մէնը դարձեալ Նարեկն է՝ «Գումարք խըմ-
բից»ը, ութսուներորդ աղօթքի առաւօտը,
ծիածանի ամենազան դոյներով որ Աստ-
ուածամօր կուսական առաջատար կը յօ-
րինեն:

Ատիկա ե՛ւ ողբ է ե՛ւ երգ քնարական,
աստուածացած մարդկային ցաւ, յոյսի և
հաւատքի տեսիլ, խառն զեփիւններու սօ-
սափիւններու հետ, քամիներու հառա-
չանքներու և զօղանջներու պաղատագին
աղօթքին առնթեր:

Ոչ ոք այնքան բանաստեղծօրէն երգած
է երկնային Մայրը, այնքան խանդաղա-
տանք և սէր դրած է իր զգացումներուն
մէջ՝ քան Գրիգոր Նարեկացին: Իրեն հա-
մար մշտնջեան տեսիլք է, անգայտ արե-
գակ և ծիծաղախիտ վանայ ծովուն վրայ
շաղոտ արուեսակ առաւօտեան:

Իր հոգեկան մենաշնորհն է համախըմ-
բել բնութեան համայնական զեղեցիկու-
թիւնները, լեզու տալ ծաղիկներուն, զեղ-
թիւնները, սոխակներուն, առուակներուն
զեղանք սոխակներուն պլպլացող աղօթք,
մըմունք, աստղերուն պլպլացող աղօթք,
յօրինելու համար իր պաղատանքի ամե-
նագոր երգը:

Արուեստագետի հօր երեւակայու-
թեամբ և քանդակիչ բառերով կը ստեղծէ
միայն իրեն յատուկ երկինք մը, ուր Աստ-
ուածամայրը արեւ պիտի ըլլայ, լուսինը՝
պատուանդան, աստղերը՝ ջահ և երկինք
հրեշտակներու դէմքերով զարդարուած,
և յետ մօայլ ժամերու պիտի բացուի
միշտ առաւօտ, միշտ անընդհան տեսիլք:

Նա պիտի ճարտարօրէն ընդելուզել իր
տենչերը, յուզումները վարդազեղ ամպե-
րու, գիտէ երեւակայել աներեւակայի
փառքեր և գտնել զանոնք մեկնաբանող
բառեր մի միայն հայ լեզուին մէջ, միայն
հայ սրտերու մէջ, հայ աշխարհի մէջ:

Եւ այս ամէնը որդիական պարզու-
թեամբ ըսուած, անկեղծ ու մտերիմ, բա-
նաստեղծութիւն և երջանիկ յոյս, երե-
ւակայութիւն և հոգեկան ապրում, խոր-
հուրդ և պայծառ տեսութիւն:

Չես գիտեր՝ որ դրախտներէն կ'առնէ իր
խօսքերը, ո՞ր ծիածանէն այնքան փար-
թամ դոյներ: Յաճախ բառ մը միայն խո-
շոր ժպիտ մ'է աշխարհիս երեսին, ոչ Մա-
րիսի պէս անցաւոր ժպիտ, այլ յաւիտե-
նական, տպաւորիչ և կենսատու, փայլ
մը որ կ'անցնի ամպերու ծոցը պատուելու
և արեւ կը դառնայ հորիզոնին վրայ:

Գումարք խմբից, զիւցազնութիւն մը
կարծես պիտի նկարագրէ, պայթումի պէս
կը սկսի - Գումարք խմբից դասուց եր-
ջանկացն, ապա կու գան փող և տաւիղ,
սրտաշարժ քնարներ, հրեշտակներ որ կը
թեւածեն անհունը լեցնելով, գովելու հա-
մար ուրախութեամբ անմատչելի լոյսերէն
աւելի այդ վերադանցը, Նարեկացիին Տի-
րամայրը:

Եւ ահա ինչպէս երկնային ճարտարա-
պետ կը շարէ երկնաւոր Մօր շուրջ աստ-
ղեր, դամբելով իր կապոյտին վրայ, արեւը